ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 փետրվարի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

24
(3055)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵՌԱԲԼՈՒՐԻ ՀՈՂԵՐԸ ՎԱՃԱՌԵԼ Է ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ, ԳՆԵԼ՝ ՎԱՉԱԳԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել Եռաբլուր զինվորական պանթեոնին հարակից հողերի օտարման գործընթացի մանրամասները՝ հղում անելով դատախազության պաշտոնական աղբյուրներին: Նիկոլ Փաշինյանն ԱԺ ամբիոնից բղավում եւ ամոթանք էր տալիս, թե Եռաբլուրի հողերը սեփականաշնորհել են ընդդիմադիրները, մինչդեռ իր մտերիմն է Եռաբլուրի հողերի վաճառքի գործով անցնում՝ ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության եւ զորքերի բնակավորման վարչության երկարամյա պետ Արմեն Սարգսյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՀՀ պաշտպանության նախարարության կապիտալ շինարարության եւ զորքերի բնակավորման վարչության երկարամյա պետ Արմեն Սարգսյանն է Եռաբլուրի հողերի իրական վաճառողը եղել: Նա սպարապետ Վազգեն Սարգսյանի գյուղից է: Հիշեցնենք նաեւ, որ Նիկոլ Փաշինյանը հեղափոխությունից հետո մասնակցել է նրա՝ գինու, կոնյակի գործարանի բացմանը:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը, նախորդ համարում հղում անելով ՀՀ դատախազությանը, ներկայացրել էր տեղեկություն այն մասին, որ 19 դրվագով հարուցված է քրեական վարույթ նույն Արմեն Սարգսյանի նկատմամբ, սակայն իրավապահները, 6 տարուց ավելի իմանալով այս մասին, նոր-նոր են սկսել գործել ու դեռ անարդյունք: Ներկայացրել էինք 6 դրվագները: Շարունակում ենք մանրամասնել:

Եվ այսպես, 7-րդ դրվագի համաձայն՝նույն Արմեն Սարգսյանը, Հարություն Մանուչարյանի համար, առանց խոչընդոտների, շուկայական արժեքից ակնհայտ ցածր գնով պաշտպանության նախարարությանն անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի՝ Ծովակալ Իսակովի պողոտային հարող տարածքում գտնվող 2.3 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողատարածքը օտարել է: Ըստ դատախազության՝ «574 մլն 260 հազար դրամ ընդհանուր շուկայական արժեքով հողամասը ընդամենը 161 մլն դրամով վաճառվել է Հարություն Մանուչարյանին: 3 տարի անց Մանուչարյանը ՌԴ քաղաքացի Գեննադի Շագորի Ստեփանյանին է վաճառել նույն հողամասը ավելի էժան՝115 մլն 900 հազար ՀՀ դրամով»:

8-րդ դրվագով Արմեն Սարգսյանը Մալաթիա-Սեբաստիա համայնքի Ծովակալ Իսակովի պողոտային հարող տարածքում գտնվող 1,4514 հա մակերեսով հողատարածքը Անուշավան Ղազարյանին է օտարել: Համաձայն դատախազության տվյալների՝399 մլն 580 հազար դրամ ընդհանուր շուկայական արժեքով հողամասը օտարվել է 101 մլն 600 հազար դրամով: Այնուհետեւ, նույն Անուշավան Ղազարյանը, իր անվամբ որպես սեփականություն հաշվառված հողամասը տրոհել է 0,36285, 0,36285 եւ 0,7257 հա մակերեսներով երեք առանձին հողամասերի, եւ վաճառել է այլ անձանց:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՍԴ դատավորի եւս մեկ թեկնածուի հարց է քննարկվում իշխանական կուլիսներում: Մասնավորապես, այս պահին քննարկվում է ՀՀ արդարադատության նախկին նախարար Արտակ Զեյնալյանի անունը, ով նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի սրտով թեկնածու է: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց տեղեկությունները ճշտել Զեյնալյանից, ով, լսելով մեր հարցը իր թեկնածու լինելու մասին, հայտարարեց. «Առանց մեկնաբանության»: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը փետրվարի 20-ին գրել էր, որ ՍԴ նախագահ Արման Դիլանյանը մտադիր է ՔՊ-ական պատգամավոր Վլադիմիր Վարդանյանին ՍԴ տանել որպես դատավոր: Սակայն Փաշինյանը դրան ոչ մի կերպ չի արձագանքել, երկմտում է, քանի որ ԱԺ պետահրավական հարցերի հանձնաժողովի նախագահի պաշտոնը դատարկ կմնա. ՔՊ խմբակցության ներսում չկա համապատասխան գիտելիքներով ու փորձով մեկը, ում կվստահեն այդ պաշտոնը: Իսկ ինչ վերաբերում է Արտակ Զեյնալյանին, ապա հիշեցնենք, որ 2019-ի ամռանը նա հրաժարական տվեց արդարադատության նախարարի պաշտոնից: Դրանից առաջ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը նրան մերժեց նույն Ազգային ժողովում: 2022 թվականի հունիսի 27-ին Արտակ Զեյնալյանը Վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավորի թեկնածու էր, սակայն չընտրվեց ՔՊ-ի կողմից: Այդ օրերին Զեյնալյանը հայտարարել էր, որ իրեն ավելի շատ տեսնում է ՍԴ դատավորի պաշտոնում: Բայց հիմա նա Երեւանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ է:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ լրագրողներին իրենց գործունեության համար հատկացված օթյակից բռնությամբ դուրս հանելու գործով մեր գործընկերները տուժող են ճանաչվում: Այս վարույթի հիմքը «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ համակարգող Դանիել Իոաննիսյանի դիմումն է: Հիշեցնենք, որ հունիսի 12-ին, երբ Բաղրամյան-Դեմիրճյան փողոցների խաչմերուկում անթույլատրելի տեսակի նռնակներ էին պայթեցնում ոստիկանները, ԱԺ-ում Կառավարության հարցուպատասխանի ժամանակ լրագրողներին բռնությամբ դուրս հանեցին լրագրողական օթյակից, որպեսզի նրանք ԱԺ նիստը չլուսաբանեն: Այս առիթով ՀՀ Քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ ՀՀ քննչական կոմիտեում, եւ օրերս սկսել են Արաբկիրի բաժին հրավիրել օթյակում գտնված լրագրողներին՝նրանց տուժող ճանաչելով: Փետրվարի 24-ին կոմիտե են հրավիրվել «24 նյուզ»-ի լրագրող Հերմինե Միքայելյանը եւ «Ժողովուրդ» օրաթերթի խմբագիր Քնար Մանուկյանը, ովքեր ճանաչվել են տուժող եւ հարցաքննվել են: «Ժողովուրդ» օրաթերթի թղթակիցը կոնկրետ անուններ է տվել, թե ում ներկայությամբ են լրագրողների մասնագիտական գործունեությունը խոչընդոտել, եւ ով է կանգնած վերահսկել իրավիճակը: Այս պահին նախաքննության շահերից ելնելով՝ այլ մանրամասներ չենք հայտնում, սակայն հետեւում ենք կոմիտեի քննության ընթացքին՝ սպասելով պատասխանատու պաշտոնյաներին պատասխանատվության կանչելու գործընթացին:



Փետրվարի 21-ին հայտնի դարձավ, որ հասարակական-քաղաքական գործիչ Էդգար Ղազարյանի նկատմամբ մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա քննադատել էր ՍԴ դատավորներին՝ներառյալ ՍԴ փոխնախագահ Վահե Գրիգորյանին՝նրա այդ պաշտոնը համարելով ապօրինի, քանի որ չկա որեւէ հրաման, որը կապացուցի, որ Գրիգորյանը ՍԴ փոխնախագահն է: Ահա Գրիգորյանը դիմել է իրավապահներին՝պահանջելով քրեական գործ հարուցել Ղազարյանի նկատմամբ: ՀՀ Քննչական կոմիտեն էլ անմիջապես հարուցել է քրեական գործ, մտել դատարան՝պահանջելով, որ Էդգար Ղազարյանի նկատմամբ կիրառվի վարչական հսկողություն, ինչի արդյունքում սահմանափակվել է Ղազարյանի խոսքի ազատությունը: Ղազարյանն իրավունք չունի քննիչների, դատախազների, դատավորների, հարկադիր կատարողների եւ նրանց մերձավոր բարեկամների մասին քննադատական միտք հնչեցնել: Ինչպես է ՍԴ դատավոր Վահե Գրիգորյանը մեկնաբանում այս իրավիճակը, որ իր դիմումի հիման վրա սահմանափակվել է հանրային գործիչի խոսքի ազատությունը: «Առանց մեկնաբանության», - կարճ ասաց Վահե Գրիգորյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ հեռախոսազրույցում՝ թողնելով անպատասխան մեր հարցերը: Իսկ մեկնաբանությունները թողեց «մեր խղճին»: Փաստ է, որ իրավունքների պաշտպանությամբ հայտնի նախկին իրավապաշտպան Վահե Գրիգորյանը, որը ՍԴ դատավոր դարձավ, իսկ հիմա ՄԻԵԴ դատավոր, դիմել է հայրենի իրավապահներին՝սահմանափակելու հանրային գործիչի գործունեությունն ու խոսքի ազատությունը:

«ԱԼԻԵՎԻ ՊԱՀԱՆՋՆ ԵՆ ԿԱՏԱՐՈՒՄ». ԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ՔԱՅՔԱՅՈՒՄ ԵՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության դատգամավոր Անանա Մկրտչյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում, անդրադարձել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի հայտարարությանը, որ նոր Սահմանադրություն ընդունելու համար հանրաքվե պետք է անցկացվի:

-Տիկին Մկրտչյան, Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ պետք է հանրաքվե անցկացվի նոր Սահմանադրություն ընդունելու համար: Վարչապետը նշեց. «Գործող Սահմանադրության ընդունման համար անցկացված բոլոր հանրաքվեներն ունեն լեգիտիմության լրջագույն պակաս: Նոր սահմանադրության ընդունման ռազմավարական նպատակը անցումն է պետականազուրկ ազգի մնացորդային գործելակարգից դեպի պետականակերտ ժողովրդի գործելակարգ»: Դուք ինչպե՞ս կմեկնաբանեք սա:

-Հանրապետության արժեքային եւ նպատակային սուբյեկտայնությունը կասկած չի կարող հարուցել որեւէ գիտակից հայի համար, բացի, բնականաբար, Նիկոլից, որովհետեւ իր համար դա ոչ թե մտածելակերպ է, կամ կարծիքի շրջանակներում է տեղավորվում, այլ Ալիեւի եւ Էրդողանի հանձնարարությունն է: Մի ժամանակ «հատուկ կապ» ունեին, հիշո՞ւմ եք՝ տարիներ առաջ ինքը գլուխ էր գովում, որ Ալիեւի հետ կապ ունի, շփվում է. հիմա Ալիեւին տրված խոստումներն այլեւս չեն բավարարում Ալիեւին: Ինչպես իր խորհրդարանը հայտարարեց, իրենք հայ ժողովրդին են ուզում ծնկի բերել, եւ ոչ թե Նիկոլ Փաշինյանին: Կարծում եմ՝ այդ տողերի մեջ հենց այս իրականությունն է: Հիմա Ալիեւն արդեն Նիկոլին պարտադրում է հայ ժողովրդին ծնկի բերել, նվաստացնել, ծաղրել արժեքները, Սահմանադրությունը, այն պետականությունը, որը երեսուն տարի դժվարությունների միջով կերտվել է:

Հիմա նա ուզում է ցույց տալ, որ մեկ ուղիղ եթերի ժամանակ կարող է ամբողջությամբ քարուքանդ անել այն գաղափարական հենքը, որ կա Հայաստանի Հանրապետությունում: Դրա համար մենք ունենք մեկ պրոբլեմ. պիտի Նիկոլ Փաշինյանը չլինի իր այդ պրոբլեմներով, իր լեգիտիմության խնդիրներով: Ցավալի է, բայց այս իրականությունը մեզանում տեղ է գտնում այն փաստի ուժով, որ մենք մինչեւ հիմա չենք կարողացել դավաճան Նիկոլից ազատվել:

Տպավորություն է, թե ի՞նչը կարող է Նիկոլ Փաշինյանին Սահմանադրության մեջ խանգարել, որը չկարողանա լուծել իր 70-ից ավելի ուսապարկերի միջոցով: Չէ՞ որ Փաշինյանին, օրինակ, պետք էր զավթել Սահմանադրական դատարանը, եւ նա չնայեց, որ սահմանադրական փոփոխություններ են պետք: Այնտեղ իրենք իրենցով հավաքվեցին, 2 ժամում «կնոպկաները» սեղմեցին եւ անցան առաջ: Նշանակում է, որ ամենեւին էլ Սահմանադրության ինչ-որ դրույթների, հոդվածների շարադրանքի մասին չէ խնդիրը, այլ այն, որ Նիկոլի առաջ խնդիր է դրված՝ Անկախության հռչակագիրը. հայ ժողովրդի հավաքական կամքը դեպի անկախություն, ինքնիշխանություն, որն ընդունվել է, պետք է կոտրեն, վերացնեն, իսկ դա կարելի է անել միայն հայ ժողովրդին ծնկի բերելով: Իր ուղիղ եթերը դրա մասին էր:

-Իսկ ի՞նչ եք կարծում անկախության հռչակագիրը եւս փոփոխության կենթարկվի՞, քանի որ նրանց նպատակը դա էր, որ Սահմանադրությունը ամբողջությամբ փոխեն, ոչ թե մի քանի հոդվածներ:

-Անկախության հռչակագիրը փոփոխության ենթարկվել չի կարող, եթե կա անկախության հռչակագիր, ուրեմն կա Երրորդ Հանրապետություն: Եթե Նիկոլ Փաշինյանը այդ Երրորդ Հանրապետության իրավական բազան ուզում է վերացնել, որովհետեւ Էրդողանն ու Ալիեւը այդ Երրորդ Հանրապետության ոչ թե սահմանադրությունն են ուզում փոխել, այլ դրա չգոյությունն են ուզում կազմակերպել, հետեւաբար Նիկոլը ստանձնել է Երրորդ Հանրապետության քայքայման գործընթացը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԴԻՄԵԼ Է ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

ԲԱՔՎԻ ՀԱՄԱՐ ԱՄՈԹԱԼԻ Է

Մենք ներկայացրել ենք խաղաղության համաձայնագրի վերջին տարբերակը, ընդամենը երկու դակատող գլուխ է մնացել, մենք մեր տեսակետներն ենք այս գլուխների շուրջ ներկայացրել, դեռեւս չենք ստացել արձագանք ադրբեջանցիների կողմից: Այս մասին, Երեւանում ընթացող Հայաստան-ԵՄ խորհրդարանական գործընկերության կոմիտեի 4-րդ նիստի ժամանակ հայտնել է ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Պարույր Հովհաննիսյանը:

«Ինչ վերաբերում է մեր «խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությանը, այստեղ նորից մենք պետք է լսենք ադրբեջանական կողմի դիրքորոշումը այս հարցի վերաբերյալ:

Սահմանազատման սահմանագծման հետ կապված առաջին համաձայնագիրն անցյալ տարի է կնքվել եւ վավերացվել, մենք սկսել ենք դա իրականացնել: Դուք գիտեք, որ սահմանագծումն ու սահմանազատումը ամենազգայուն թեմաներից մեկն է մեր օրակարգում, մեր հարեւանի հետ բանակցությունների շրջանակներում: Մենք հույս ունենք, որ կունենանք դրական դինամիկա: Բաքվից հնչող հռետորաբանությունն այդքան էլ զարմացնող ուղերձներ մեզ չի ուղարկում, ամեն անգամ նրանք վտանգավոր սպառնալից ուղերձներ են ուղարկում: Մեր գերիները շարունակում են այնտեղ մնալ, ինչն ամոթալի գործընթաց է Բաքվի համար:

Մենք խնդրում ենք, որ մեր բոլոր գործընկերներին ներգրավեն այն ջանքերի մեջ, որը մենք խաղաղության համար ենք ներդնում եւ շնորհակալ ենք Եվրամիությանը, բայց ԵՄ միջնորդական ձեւաչափը հիմա չի գործում: Մենք խոսել ենք նոր նախագահի ներգրավման մասին եւ ակնկալում ենք նրա այցը շատ մոտ ժամանակում, որ նա կայցելի Հայաստան եւ Ադրբեջան, որպեսզի այս գործընթացում մենք ունենանք առաջընթաց եւ հաստատենք խաղաղություն: Նույն մոտեցումն ունենք Թուրքիայի հետ կապված, մենք շատ ջանքեր ենք գործադրել նորմալիզացնելու համար մեր հարաբերությունները: Քաղաքական երկխոսությունը տարվում է արտգործնախարարների, նախագահի եւ վարչապետի մակարդակներով, բայց շատ համաձայնագրեր դեռեւս չեն իրականացվել:

Խոսքը դիվանագիտական անձանց, երրորդ երկրների քաղաքացիների՝ սահմանն անցնելու հնարավորության մասին է, բայց ես չեմ կարող կոնկրետ առաջընթաց արձանագրել այդ մասով», - ասել է նա:

ԸՆՏԱՆԻՔԸ ՔՊ–ԱԿԱՆ Է

Ալեն Սիմոնյանի մայրը եւ եղբայրը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներ են: ArmLur.am-ը ՔՊ-ական պատգամավորների էջերում նկատեց տեղեկություն, որ, փետրվարի 24-ին տեղի է ունեցել Կենտրոն տարածքային կառույցի խորհրդի նիստ:

Նիստին մասնակցել են ՔՊ խմբակցության պատգամավորներ Ծովինար Վարդանյանը, Մարիամ Պողոսյանը, Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, տիկտոկեր Էլլադա Մանուկյանը եւ ՔՊ կուսակցության այլ անդամներ: Լուսանկարներում նկատվում է, որ ՔՊ կուսակցական նիստին մասնակցում են նաեւ Ալեն Սիմոնյանի եղբայրը՝ Կառլեն Սիմոնյանը եւ մայրը՝ Մարինա Հովհաննիսյանը: ArmLur.am-ին ՔՊ կուսակցության աշխատակազմի ղեկավար Արուսյակ Մանավազյանը հայտնեց, որ Ալեն Սիմոնյանի մայրը ՔՊ առաջին համագումարից դեռ կուսակցության անդամ է, իսկ եղբայրը՝ Կառլեն Սիմոնյանը, 2024 թվականից է ՔՊ կուսակցությանը անդամագրվել:

ԿՆԵՐԿԱՅԱՆԱ ԱԺ

Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը կներկայանա Ազգային ժողով, նա այս օրերին գործընթաց է սկսել: Ինչպես ArmLur.am-ը նկատում է՝ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, նրա տեղակալները մեկը մյուսի հետեւից այցելում են տարածքային եւ մարզային դատախազություններ եւ ամփոփում, թե ինչ են արել 2024 թվականին: Այս գործընթացը մեկ նպատակ ունի, քանի որ Աննա Վարդապետյանը պետք է ներկայանա Ազգային ժողով եւ տարեկան հաշվետվություն ներկայացնի: Դիմեցինք Գլխավոր դատախազություն. որտեղից ի պատասխան հայտնեցին, որ Գլխավոր դատախազը, Ազգային ժողովի կանոնակարգ օրենքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, յուրաքանչյուր տարի՝ մինչեւ ապրիլի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում Հայաստանի Հանրապետության դատախազության նախորդ տարվա գործունեության մասին:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի եւս ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը 2024 թվականի ընթացքում կատարված աշխատանքները տեղերում ամփոփելու, առաջնահերթություններ սահմանելու եւ նոր հանձնարարականներ տալու նպատակով անձամբ այցելում է Երեւան քաղաքի վարչական շրջանների, մարզերի դատախազություններ եւ քննարկում կատարված աշխատանքները:

ՆՈՐ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել, որով արդարադատության փոխնախարար է նշանակել: «Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով՝ Օկսաննա Աբրահամյանին նշանակել արդարադատության նախարարի տեղակալ»,-նշվում է որոշման մեջ: Հիշեցնենք, որ Օ. Աբրահամյանը Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանատան ծրագրերի ղեկավարն է եղել:

ԻՐԱՎԻՃԱԿ

Ա. ՍԻՄՈՆՅԱՆԸ ԵՎ ՄԱՏՎԻԵՆԿՈՆ ԶՐՈՒՑԵԼ ԵՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի հետ:

Զրուցակիցները անդրադարձել են հայ-ռուսական հարաբերությունների օրակարգին, ինչպես նաեւ ԱՊՀ ՄԽՎ խորհրդում եւ այլ հարթակներում համագործակցությանը վերաբերող տարբեր հարցեր են քննարկել: Անդրադարձ է կատարվել նաեւ Վալենտինա Մատվիենկոյի՝ Հայաստան նախատեսված պաշտոնական այցի կազմակերպչական հարցերին:

ԱՐԳԵԼԵԼ ԵՆ ՆԿԱՐԱՀԱՆՎԵԼ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ երգիչ, դերասան Հայկ Դուրգարյանին արգելել են նկարահանվել հեռուստասերիալում:

Դուրգարյանը նկարահանվում էր «Մարիա» հեռուստասերիալում, որտեղ իրավապահի դերում էր: ArmLur.am-ի ստացած տեղեկության համաձայն՝ Հայկ Դուրգարյանին արգելել են հեռուստասերիալում նկարահանվել այն պատճառով, որ նա անցնում է քրեական վարույթով:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը հայտնել էր, որ երգիչ, դերասան Հայկ Դուրգարյանի մեքենայից իրավապահները հայտնաբերել էին «Կրիստալ» տեսակի թմրամիջոց, իսկ ավելի ուշ գրել էինք, որ վերջինիս մեքենան հետախուզման մեջ է եղել հարկադիր կատարման ծառայության կողմից:

Երգիչ Ավո Ադամյանն ArmLur.am-ին փոխանցեց, որ տեղեկությունը չի համապատասխանում իրականությանը, եւ Հայկ Դուրգարյանը շարունակում է նկարահանվել «Մարիա» սերիալում:

«Նման բան չկա եւ չի էլ եղել: Հայկի հետ ոչ մի խնդիրներ չկան. բնականաբար, նման բաներ բոլորի հետ կարող են պատահել: Փառք Աստծու՝ ամեն բան նորմալ է: Ասեմ ավելին՝ Հայկը համերգների է ինձ հետ», - ասաց Ավո Ադամյանը:

ԱՆԿԱՐԱՅԻՑ՝ ԹԵՀՐԱՆ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովն Անկարայից ժամանել է Թեհրան: Լավրովն Իրանի մայրաքաղաքում բանակցություններ կանցկացնի իրանցի պաշտոնակից Աբբաս Արաղչիի, ինչպես նաեւ այլ պաշտոնատար անձանց հետ:

«Բանակցությունների ընթացքում պլանավորվում է առանձնահատուկ շեշտադրում անել փոխշահավետ առեւտրատնտեսական համագործակցության հետագա ընդլայնման վրա՝ էներգետիկայի եւ տրանսպորտի ոլորտներում առանցքային համատեղ նախագծերի իրագործման համատեքստում», - հաղորդել են Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությունից:

Նախատեսվում է կարծիքների փոխանակում մի շարք հրատապ միջազգային հարցերի շուրջ:

ԲԱՔՎԻ ՇԻՆԾՈՒ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐԸ

ԵՐԵԿ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԷՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԴԱՏԸ

Բաքվի դատարանում երեկ շարունակվում էր Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի գործով դատավարությունը: Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների՝ նիստը նախագահել է Բաքվի ռազմական դատարանի դատավոր Զեյնալ Աղաեւը: Նախորդ դատական նիստին մեղադրող դատախազն ավարտել է մեղադրական եզրակացության եզրափակիչ մասի ընթերցումը:

Վարդանյանը մեղադրվում է Ադրբեջանի դեմ պատերազմ ծրագրելու, նախապատրաստելու եւ իրագործելու, ահաբեկչության ֆինանսավորման, հանցավոր կազմակերպություն ստեղծելու, ապօրինի զենք-զինամթերք ձեռք բերելու, տեղափոխելու, կտտանքներ իրականացնելու, մարդկանց տեղահանելու համար:

Բաքուն Արցախի նախկին պետնախարարին մեղադրում է նաեւ արտերկրում ադրբեջանցի դիվանագետների դեմ ահաբեկչական գործողություններ ծրագրելու, կամ ինչպես Ադրբեջանի գլխավոր դատախազությունն է ձեւակերպել՝ «Նեմեսիս 2» կազմակերպելու համար: Հայաստանում կամ Արցախում որեւէ ռազմական գործողության չմասնակցած նախկին պետնախարարին մինչեւ ցմահ ազատազրկում է սպառնում:

«Ես որոշում եմ կայացրել հացադուլի միջոցով բողոքս հայտնել՝ ի նշան իմ նկատմամբ իրականացվող դատական ֆարսի», - նշել է Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը միջազգային հանրությանն ուղղված հայտարարությունում՝ ի նշան կեղծ «դատավարության» դեմ բողոքի: Հայտարարությունը Վարդանյանը փոխանցել է ընտանիքի հետ հեռախոսազրույցի ժամանակ: «Սա իմ պատասխանն է միջազգային իրավունքի եւ Ադրբեջանի դատավարական իրավունքի նորմերի կոպտագույն խախտումներին: Այն, ինչ կատարվում է դատարանի դահլիճում, չի կարելի համարել դատավարություն: Դա քաղաքական շոու է, որտեղ ցուցադրաբար արհամարհվում է արդար դատաքննության իմ իրավունքը», - նշել է Արցախի նախկին պետնախարարը:

«Չնայած, որ Ադրբեջանը հանդիսանում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ու Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի անդամ, այս գործընթացն իրականացվում է բոլոր կիրառելի իրավական նորմերի եւ իրավական ընթացակարգերի կոպտագույն խախտումներով: Իմ գործը քննվում է ապօրինի ռազմական, ոչ թե քաղաքացիական դատարանը: Ես չեմ ունեցել լիարժեք հասանելիություն մեղադրական եզրակացությանն ու իմ դեմ ներկայացված այսպես կոչված «ապացույցներին». ադրբեջաներենով գրված 422 հատոր նյութերին ծանոթանալու համար ինձ տրամադրվել է ընդամենը 21 աշխատանքային օր», - նշված է հայտարարությունում:

Վարդանյանը հավելել է նաեւ, որ իրեն ներկայացված «մեղադրական եզրակացությունը» պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում, քանի որ ստորագրված չէ մեղադրողների կողմից»: «Այդ «փաստաթղթի» թարգմանության մեջ անգամ թույլ են տրված այնպիսի սխալներ, որոնք հնարավորություն չեն տալիս հասկանալ ինձ ներկայացված մեղադրանքների էությունը»:

«Ես զրկված եմ պաշտպանության իրավունքից. սահմանափակվում է իմ փաստաբան Աբրահամ Բերմանի հասանելիությունը գործի նյութերին, առգրավվում են փաստաթղթեր, հոգեբանական ճնշում են գործադրում նրա վրա: Բացի այդ, միջազգային իմ իրավաբանական թիմին արգելվել է շփվել կամ հանդիպել ինձ հետ եւ հասանելիություն ունենալ գործի նյութերին», - նշել է Վարդանյանը:

Նա նաեւ ընդգծել է, որ իրեն չի թույլատրվում հրավիրել պաշտպանական կողմի վկաների եւ բողոք ներկայացնել ընդդեմ այն խախտումների, որոնք թույլ են տրվել նախաքննության եւ դատաքննության ընթացքում: «Բոլոր նիստերն անցկացվում են գաղտնի եւ փակ՝ հանրության համար: Միջազգային լրագրողների եւ միջազգային ներկայացուցիչների մուտքը դատարան խոչընդոտվում է»:

Ա. ԽԵՉՈՒՄՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՍԵԼՖԻ ԱՆՈՂ ՔՆՆԻՉԸ ⇨

Քննչական կոմիտեի նախագահը Փաշինյանի հետ սելֆի արած քննիչին նոր պաշտոնի է տեղափոխել, ինչը դժգոհության պատճառ է դարձել: Բանն այն է, որ կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանը Կամո Սահակյանին նշանակել է ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության պետի տեղակալ՝ ազատելով Կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության պետի պաշտոնից: Ըստ ArmLur.am-ին հասած լուրերի՝ այս պաշտոնները հավասարազոր պաշտոններ են, սակայն քննչական կոմիտեում այս հանգամանքը համարել են պաշտոնի իջեցում, քանի որ մի ողջ ստորաբաժանման պետի պաշտոնից Սահակյանը տեղափոխվել է՝ նշանակվելով մեկ այլ վարչության պետի տեղակալ:

Ինչի՞ց է դժգոհ Արթուր Պողոսյանը, որ Կամո Սահակյանին այլ պաշտոնի է տարել, թե՞ նրա գործունեության մասով այլ բացահայտումներ կան: Ի պատասխան՝ Կոմիտեից հայտնեցին, որ կադրային փոփոխություններ են, եւ դեռ ավելին՝ Արթուր Պողոսյանը շնորհավորել է նաեւ Հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության նախկին պետ Կամո Սահակյանին՝ Զինվորական քննչական գլխավոր վարչության պետի տեղակալի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ եւ կարեւորել է այդ ուղղությամբ աշխատանքներն ակտիվացնելու անհրաժեշտությունը:

Հիշեցնենք, որ Կամո Սահակյանը հայտնի դարձավ 2020 թվականի հունվարի 15-ին պաշտոնատար անձանց գաղտնալսման գործով: Նիկոլ Փաշինյանը հրավիրվել էր Կոմիտե՝ հարցաքննության, որտեղ քննիչ Կամո Սահակյանի հետ սելֆի էր արել:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀՌՈՄԻ ՊԱՊԸ ԱՊԱՔԻՆՎՈՒՄ Է

Հռոմի Ֆրանցիսկոս պապը հիվանդանոցում շարունակում է ապաքինվել թոքաբորբից եւ վերսկսել է որոշակի աշխատանք կատարել: Նա զանգահարել է Գազայի քրիստոնյա ծխական համայնք՝ հայտնելու իր աջակցությունը: 88-ամյա քահանայապետի մոտ, որը հոսպիտալացվել է փետրվարի 14-ին, շնչառական ասթմատիկ խանգարում չի գրանցվել, եւ որոշ լաբորատոր հետազոտություններ բարելավման նշաններ են ցույց տվել, թեեւ բժիշկները զգուշավոր են՝ հաշվի առնելով նրա տարիքը եւ բժշկական պատմությունը: Հռոմի Ֆրանցիսկոս պապը շնորհակալություն է հայտնել ժողովրդին այս օրերին իր առողջության համար աղոթելու համար: Փետրվարի 24-ի երեկոյան հարյուրավոր մարդիկ, այդ թվում՝ կարդինալներ, եպիսկոպոսներ եւ հռոմեական կուրիայի անդամներ, հավաքվել են Սուրբ Պետրոսի հրապարակում՝ աղոթելու Հռոմի Ֆրանցիսկոս պապի ապաքինման համար:

ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԸ ՇԱՏԱՑԵԼ ԵՆ

Վերջին մեկ ամսվա ընթացքում շտապօգնության աշխատակիցների նկատմամբ գրանցվել է բռնության երկրորդ դեպքը:

Շտապօգնության աշխատակցի նկատմամբ առաջին բռնության դեպքը գրանցվել է փետրվարի 21-ին Շիրակի մարզում: ՀՀ ՆԳՆ-ից հայտնել էին, որ գանգուղեղային վնասվածքով Ազատան բնակավայրից «Գյումրի» ԲԿ բուժօգնության է տեղափոխվել 31-ամյա բուժակ:

ՆԳՆ-ի փոխանցմամբ փետրվարի 24-ին Լեռոյի փողոցում անհայտ անձինք ծեծի են ենթարկել շտապօգնության աշխատակիցների:

Շտապօգնության աշխատակիցներին ծեծի ենթարկելու պատճառը եղել է այն, որ ալկոհոլի ազդեցության տակ գտնվող քաղաքացիներն իրենց վատ զգալու պատճառով կանչել են շտապօգնություն եւ վեճի բռնվել աշխատակիցների հետ: Հարկ է նշել, որ տղամարդկանցից մեկի մոտ հայտնաբերվել է 6 գրամից ավելի դեղնականաչավուն զանգվածով երկու փաթեթ եւ դեղնականաչավուն զանգվածով գլանակ, իսկ մյուսի մոտ՝ դեղնականաչավուն զանգված:

Մասնագիտական պարտքը կատարող բուժաշխատողներին բռնության ենթարկելուն անդրադարձել է նաեւ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը: «Իրենց մասնագիտական պարտքը կատարող բուժաշխատողների հանդեպ ոտնձգության դեպքերը, ցավոք, շարունակվում են: Գիշերը բռնության հերթական դեպքն է տեղի ունեցել Երեւանում շտապօգնության մեր բժիշկների նկատմամբ՝ ովքեր շտապել են կանչի՝ անհրաժեշտ բուժօգնություն տրամադրելու: Օրեր առաջ էլ նմանօրինակ դեպք էր արձանագրվել Շիրակի մարզի շտապօգնության բուժակի նկատմամբ: Խստորեն դատապարտում եմ տեղի ունեցածը»,- գրել է Ավանեսյանը: Նշենք, որ նախորդ տարի եւս գրանցվել են դեպքեր, երբ բուժաշխատողների նկատմամբ բռնություն է գործադրվել: Անցյալ տարվա ուշագրավ դեպքերից մեկն էլ այն էր, որ շտապօգնության աշխատակիցների առջեւ փակել էին սեղյակներից մեկի դուռն ու դանակով սպառնացել, որ պետք է փրկեն իրենց մոր կյանքը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԳԱՌՆԵՐ ԳՈՂԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԵՎԱՆԳԵԼ ԵՆ ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ

Ս. Ղ.-ին մեղադրանք է առաջադրվել, որ նա 2025 թ. հունվարի 7-ին՝ ժամը 11:00-ի սահմաններում, իրենց՝ Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի 1-ին փողոցի 103-րդ հասցեի տան բակ է հրավիրել անչափահասներ Ա. Փ-ին եւ Վ. Խ.-ին եւ նրանց մեղադրել է 2025թ. հունվարի 5-ին՝ ժամը 13:00-ից մինչեւ 15:00-ը ընկած ժամանակահատվածում, իր 5 գլուխ գառները գողանալու համար, սակայն անչափահասների կողմից իրենց մասնակցությունը գողությանը հերքելուց հետո, նրանց կողմից արարքը խոստովանելու նպատակով Ա.Փ.-ի նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելուց անմիջապես հետո, վերջինիս կամքին հակառակ առեւանգել է նրան, մասնավորապես՝ բռնելով Ա. Փ.-ի աջ ուսահոդի հատվածից՝ քարշ տալով տեղափոխել է այլ վայր՝ նույն հասցեի տան նկուղային սենյակ, եւ մոտ 30 րոպե պահել այնտեղ:

Բացի այդ, 2025 թվականի հունվարի 7-ին՝ ժամը 17:30-ի սահմաններում, վերջինիս կամքին հակառակ առեւանգել է նրան, մասնավորապես՝ հիշյալ բնակավայրի 10-րդ փողոցի 17-րդ հասցեի տան հյուրասենյակում Արարատ Փանդունցի ձեռքից բռնելով, նրան քարշ է տվել տան բակ, որտեղ նրան հարվածներ է հասցրել եւ կրկին քարշ տալով՝ տեղափոխել է այլ վայր՝ Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի «Նորակնունք» եկեղեցու հարեւանությամբ գտնվող, իր կողմից որպես անասնագոմ եւ պահեստարան օգտագործվող շինություն ու մինչեւ ժամը 18:00-ի սահմանները պահել այնտեղ:

Այս դեպքով իրավապաշտպանները նախաքննության ավարտ են հայտարարել ու գործը ուղարկել են դատարան եւ մեղադրյալի աթոռին է հայտնվել Ս. Ղ.-ն:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԱՆԱԿԱՀԱՐՎԱԾԸ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ԽՈՍԵԼ

Նախօրեին արտակարգ դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում: ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ոստիկանության Նաիրիի բաժնում տեղեկություն է ստացվել, որ Նոր Հաճն քաղաքի շենքերից մեկի բակում դանակահարվելու հետեւանքով «ձախ դաստակի հինգերորդ մատի հիմքի շրջանի կտրած-ծակած վերք, ձախ ականջի զույգ այտերի քերծվածքներ» ախտորոշմամբ «Աբովյան» բժշկական կենտրոն է տեղափոխվել մի երիտասարդ: Հիվանդանոց է մեկնել ոստիկանության Նաիրիի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Սուրիկ Ջանիկյանի եւ բաժնի պետի տեղակալ Մկրտչյանի գլխավորությամբ, որտեղ պարզվել է, որ վիրավորը Կոտայքի մարզի բնակիչ 19-ամյա Սերգեյ Բ.-ն է:

Ոստիկանության ծառայողներին Սերգեյ Բ.-ն դեպքի վերաբերյալ այլ մանրամասներ չի հայտնել եւ ձեռնարկվում են միջոցառումներ մարմնական վնասվածք պատճառած անձի ինքնությունը պարզելու, վերջինիս եւ հանցագործության գործիք հանդիսացող առարկան հայտնաբերելու ուղղությամբ: Դեպքի փաստով ոստիկանության Նաիրիի բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ Քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Նաիրիի քննչական բաժին:

ՊԱՐԶՎԵԼ Է ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 24-ին համացանցում տեսանյութ էր շրջանառվում, թե ինչպես է «ԲՄՎ»-ի վարորդը նույն օրը՝ կեսօրին, հարսանեկան արարողության ժամանակ, Վաղարշապատ-Արմավիր ավտոճանապարհին, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորում երթեւեկության մյուս մասնակիցների նկատմամբ՝ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը եւ ճանապարհային երթեւեկության կանոնները՝ կատարելով, այսպես կոչված, «դրիֆթ»:

Այս մասին հայտնում է ՆԳՆ ոստիկանությունը:

Հասարակական կարգը խախտում են նաեւ հարսանեկան արարողության մասնակից մի քանի «Մերսեդեսի» վարորդներ՝ երթեւեկելի գոտում «դրիֆթ» կատարելու ընթացքում մեքենաներով փակելով ճանապարհը:

Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչության, Արմավիրի համայնքային բաժնի եւ Արմավիրի պարեկների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ պարզվել է «ԲՄՎ»-ն եւ «Մերսեդեսները» վարողների ինքնությունը: Խուլիգանություն կատարելու կասկածանքով երեք տղամարդ ձերբակալվել եւ ավտոմեքենաներով հանդերձ տեղափոխվել են Համայնքային ոստիկանության Արմավիրի բաժին:

Նրանք եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Վաղարշապատի քննչական բաժին:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՈՒՐԳ Է ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ

2019 թվականին Ն.Գ.-ն եւ Ն.Հ.-ն՝ վերջինիս հոր՝ Կ.Հ.-ի առաջարկով հիմնել են «Վան Քարտ» ընկերությունը, որի շրջանակներում «android» եւ «ios» գործավարական համակարգերով աշխատող «One Card LLC» անվանումով բջջային հավելվածի, ինչպես նաեւ սոցիալական կայքերի միջոցով գովազդել են տարբեր տնտեսվարող սուբյեկտների կողմից առաջարկվող ապրանքներ եւ ծառայություններ:

Քննչական կոմիտեի փոխանցմամբ բջջային հավելվածի օգտատերերին հնարավորություն է ընձեռվել փոխանցումներ կատարել համակարգում գեներացված հաշիվների միջեւ, ինչպես նաեւ թույլատրվել է Կ.Հ.-ի, Ն.Հ.-ի եւ Ն.Գ.-ի կողմից կառավարվող հաշիվներից գումարներ մուտքագրել եւ կանխիկացնել վճարահաշվարկային համակարգի, բանկային քարտերի, էլեկտրոնային դրամապանակի եւ կրիպտոարժույթի միջոցով, որի ընթացքում յուրաքանչյուր գործարքի համար ծրագրային հավելվածի շահառուից գանձվել է շրջանառվող գումարի 8-ից մինչեւ 16 տոկոսը՝ առանց համապատասխան լիցենզիայի գեներացնելով եւ շրջանառության մեջ դնելով 2 ՀՀ դրամ փոխարժեքով «crypto one» անվանումով էլեկտրոնային արժույթը: Արդյունքում, խմբի անդամները ոչ իրավաչափ եղանակով գործող ֆինանսական համակարգում գովազդային արշավի միջոցով «crypto one» էլեկտրոնային արժույթը ներկայացրել են որպես իրական ներդրումային հնարավորություն՝ օրական մեկ տոկոս շահույթի խոստումով:

Այսպիսով, հանցավոր խմբի կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում ձեւավորվել է 10.000 եւ ավելի ներդրողների մասնակցությամբ գործող ֆինանսական բուրգ, որում ներգրավվել է առանձնապես խոշոր չափերի՝ առնվազն 100 մլն ՀՀ դրամին համարժեք դրամական եւ գույքային միջոցներ:

Ենթադրյալ ֆինանսական բուրգի համակարգողները ներդրումային հոսքերն առավել ակտիվացնելու նպատակով սոցիալական ցանցերում հաղորդագրություն են տարածել այն մասին, որ կազմակերպության պայմանական միավորի փոխարժեքը 2 դրամից աճելու է մինչեւ 3 դրամ, սակայն նոր ներդրումային հոսք ապահովելուց եւ ստացված գույքային միջոցներին փաստացի տիրանալուց հետո կտրուկ փոխել են նախկինում խոստացված պայմանները եւ մի քանի հարյուր անգամով նվազեցրել են «crone» պայմանական անունով միավորի փոխարժեքը՝ զրոյացնելով ներդրում կատարած բազմաթիվ անձանց ֆինանսական միջոցները: Կ.Հ.-ի, Ն.Հ.-ի, Ն.Գ.-ի, Ի.Պ.-ի եւ Ա.Գ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 282-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (ֆինանսական բուրգ ստեղծելը, կազմակերպելը կամ ղեկավարելը): Վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է բացակայելու արգելքը:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ ըստ էության քննության առնելու համար դատարան ուղարկելու միջնորդությամբ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 21-ից 24-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 180 դեպք, որից 7-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓՈԽՀԱՏՈՒՑՎԵԼ Է 48,6 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք. «2025 թվականի պետական բյուջով որքա՞ն գումար է նախատեսված 2024 թվականի մայիսի 27-ի ջրհեղեղից տուժած, Տավուշի մարզի բնակիչ ֆիզիկական անձանց, որքա՞ն՝ գյուղացիական տնտեսություններին, որքա՞ն՝ տնտեսվարողներին փոխհատուցելու համար»: Մարզպետարանից պատասխանել են. «Գյուղացիական տնտեսությունների հետ կապված հարցերը կարգավորվել են ՀՀ կառավարության 15.08.2024թ. թիվ 1301-Լ որոշման կարգի համաձայն: Տուժել է 307 գյուղացիական տնտեսություն. Նոյեմբերյան համայնքում՝ 292, Դիլիջան համայնքում՝ 15, որոնց փոխհատուցման նպատակով տրված գումարը կազմել է 48,665 մլն դրամ»:

ԴԱՏԻ Է ՏՎԵԼ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ

Բերդ համայնքի Այգեձոր գյուղի նախկին գյուղապետ Սասուն Սաֆարյանը, Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան անհիմն հարստացման գումարը բռնագանձելու պահանջի մասին, քաղաքացիական հայց է ներկայացրել ընդդեմ Բերդի համայնքապետարանի:

2025թ. հունվարի 16-ին Իջեւան քաղաքում դատավոր Նարինե Անանյանը որոշել է հայցադիմումը ընդունել դատարանի վարույթ, այդ գործով նախնական դատական նիստեր են կայանում: Այգեձոր բնակավայրի վարչական ղեկավար Լորիս Միրզոյանին հարցրինք, թե ինչին է վերաբերում այդ հայցը: Նա հայտնեց, որ 1998 թվականին, երբ ինքը Այգեձոր համայնքի ղեկավարն էր, գյուղը սնուցող խմելու ջրագիծ են կառուցել: Հետագայում, երբ համայնքի ղեկավարը Սասուն Սաֆարյանն է եղել, ինչ-որ ծրագրով այդ ջրագծի երկաթյա, 219 մմ տրամագծով շուրջ 1 կմ երկարությամբ խողովակաշարը փոխարինել են պլաստմասսե խողովակներով, Սասուն Սաֆարյանի որոշմամբ կտրտել են այդ խողովակները: Միրզոյանի խոսքերով՝ այդ գործով քննչական կոմիտեն քննություն է իրականացրել, որոշվել է, որ այդ խողովակները պետք է վերադարձվեն Բերդ համայնքին: Դրան համաձայն չլինելով՝ Սասուն Սաֆարյանը դատարան քաղաքացիական հայց է ներկայացրել: Ներկայումս այդ խողովակների կեսը գտնվում է Այգեձոր գյուղում՝ Սասուն Սաֆարյանին պատկանող տարածքում: Լ. Միրզոյանը հայտնեց, որ իրենք չեն առարկել, որ համայնքապետարանի ծառայողական «Նիվա» ավտոմեքենան տրվի որպես Սասուն Սաֆարյանի սեփականություն:

2017 թվականին, երբ կայացան խոշորացված Բերդ համայնքի ղեկավարի ընտրություններ, Սասուն Սաֆարյանն ինքնառաջադրվել էր որպես համայնքի ղեկավարի թեկնածու, սակայն համայնքի ղեկավար չընտրվեց:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԲԵԿՈՒՄՆԱՅԻՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ ԵՆ ՊԵՏՔ

Անցյալ տարվա հոկտեմբերի 13-ին Ֆուտբոլի Ազգային Հավաքականը ղարտվեց Հյուսիսային Մակեդոնիայի հետ դիմակայությունում: Խաղից հետո հեռացվեց այդ ժամանակ մարզիչ եղած ուկրաինացի մասնագետ Ալեքսանդր Պետրակովը: Սակայն միայն մարզչի հեռացումը չբավարարեց շատ ֆուտբոլասերների, եւ նրանք պահանջեցին Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի (ՀՖՖ) նախագահ Արմեն Մելիքբեկյանի հրաժարականը: Հրաժարականի պահանջին միացան նաեւ մի շարք ֆուտբոլային ակումբներ: Այս ամենի եւ առհասարակ ֆուտբոլային խնդիրների վերաբերյալ Armlur.am–ը զրուցել է Հայկական Առաջին ճակատ (FAF) հիմնադիր անդամ Սերգեյ Ջանջոյանի հետ:

-Պարոն Ջանջոյան, հոկտեմբերի 13-ից Դուք պահանջում եք ՀՖՖ նախագահ Արմեն Մելիքբեկյանի հրաժարականը. ինչո՞ւ արդյունք չունեցաք:

-Ֆուտբոլում գլոբալ անհաջողություններն ու ձախողումներն էին պատճառը. դա կուտակվել էր տարիների ընթացքում, խաղը ուղղակի առիթ էր, կարելի է ասել՝ այդ ամենը պայթեց, ու ակցիաները սկսեցին իրար հետեւից տեղի ունենալ:

-Անցյալ տարի ՀՖՖ-ի կողմից իրականացվող խաղերը փորձում էիք խաթարել եւ խոչընդոտել, շարունակելո՞ւ եք այդ մարտավարությունը այս տարի անցկացվող խաղերում:

-Քանի մենք չենք հասել մեր վերջնական նպատակին, տարաբնույթ միջոցառումներ, ակցիաներ Հայաստանի հավաքականի եւ հայկական ակումբների բոլոր ֆան ակումբներով շարունակելու ենք իրականացնել, իսկ թե ակցիաներն ինչ բնույթ կկրեն՝ բոլորը կտեսնեն առաջիկայում:

-Առաջիկայում հանդիպումներ են սպասվում Վրաստանի ֆուտբոլի հավաքականի դեմ: Այդ հանդիպումների ժամանակ իրականացնելո՞ւ եք բողոքի ակցիաներ:

-Հայաստան-Վրաստան խաղը մեզ համար առանցքային նշանակություն ունի, առհասարակ հայ-վրացական դիմակայությունը ցանկացած սպորտաձեւում շարքային դիմակայություն չէ, եւ մենք Վրաստանի դեմ խաղին պատրաստվում ենք: Այն կարծես մեզ համար դերբի է, պատրաստվում ենք առաջին հերթին հաղթել մեր մրցակցին դաշտում, տրիբունայում: Մի ցավոտ բան ուզղակի ասեմ. մեր երկրին շատ-շատ են այս պահին պակասում կարեւոր, բեկումնային հաղթանակները, եւ այս խաղը կարող է լինել այդպիսի նշանակալի իրադարձություն: Վրաստանին հաղթելը, եւ Վրաստանի դեմ խաղը կարելի էր սարքել մի ինչ-որ ֆուտբոլային, մարզական տոն երկրի համար, որի հաղթանակը կարեւոր նշանակություն կունենար ոչ միայն ֆուտբոլի երկրպագուների համար այլեւ երկրի համար: Ցավոք, ֆեդերացիան այդ խաղը թողել է մի կողմի վրա, եւ այդ խաղի մասին կարծես ընդհանրապես չի խոսում, ոչ մի բան չի պատրաստվում այդ խաղի շուրջ: Վրաստանի խաղին կարծում եմ եւս կլինեն ակցիաներ, բայց ավելին ասել դեռեւս չեմ կարող:

-Նոյեմբերի 14-ին տարածել էիք հայտարարություն, որ ցանկանում եք հանդիպել ՀՖՖ նախագահին սատարող ակումբների եւ ՀԿ-ների ղեկավարների կամ ներկայացուցիչների հետ, եղա՞ն արձագանքներ:

-Ինչպես սպասելի էր՝ նրանցից արձագանք չեղավ, եւ դա շատ ցավալի է: Մենք նույնիսկ փորձեր կատարեցինք հանդիպելու այդպիսի ակումբներին: Ցավալին գիտե՞ք՝որն է, որ ֆուտբոլի ֆեդերացիան մի գործելաոճ է որդեգրել, որտեղ այդ բոլոր ակումբներին, կարծես ինչ-որ բաներ խոստանալով, ինչ-որ բաներ կատարելով քաշել է իր կողմը: Ես խոսել եմ այդ ակումբներից մի քանիսի հետ, նրանք գրեթե նույն դժգոհությունն ունեն, ինչ մենք, սակայն ունեն ֆուտբոլի թիմ, ունեն ինչ-որ ակնկալիք ֆեդերացիայի կողմից, եւ ցավալիորեն չեն կարողանում բարձրաձայնել: Մի վատ ու կեղտոտ երեւույթ է դրսեւորվում մեր ֆուտբոլում ակումբների հետ կապված:

-Դուք տարբերակներ ունե՞ք ՀՖՖ նոր ղեկավարի վերաբերյալ:

-Նախկին սխալները չգործելու համար մենք պատկերացնում ենք, որ ՀՖՖ ղեկավարության հեռացումից հետո մենք պետք է ստեղծենք համերաշխության հարթակ, որտեղ կներգրավվեն ֆուտբոլի շահառուները, մեր հայկական ֆուտբոլային աշխարհի ներկայացուցիչները:

Զրուցեց ԱՐՄԵՆ ԽԵՉՈՒՄՅԱՆԸ

ԱՐՏԱՔԻՆ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

Ռուս-ամերիկյան հաջորդ շփումները տեղի կունենան փորձագիտական մակարդակով՝ արտաքին գործերի նախարարությունների գծով: Այդ մասին լրագրողներին հայտնել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

Նա այդ հարցը վերահաստատել է Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարությանը: «Հաջորդ շփումները հերթի մեջ են. դրանք շփումներ են արտաքին գործերի նախարարությունների գծով, շփումներ փորձագիտական մակարդակով, ուստի խորհուրդ եմ տալիս դիմել արտաքին գործերի նախարարություն այդ հանդիպման մասին տեղեկատվության համար»,-ասել է նա: Պեսկովի խոսքով՝ այդ բանակցություններում կքննարկվեն երկխոսության կարգավորման միջոցները: Նա նաեւ պարզաբանել է, որ առաջին հերթին դիվանագիտական գերատեսչությունների աշխատանքը փոխադարձ հիմունքներով կարգավորելու միջոցները «կքննարկվեն հենց այդ նույն բանակցություններում՝ փորձագիտական մակարդակով»:

Ավելի վաղ ՌԴ արտաքին գործերի փոխնախարար Սերգեյ Ռյաբկովը հայտնել էր, որ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ բանակցությունները երկկողմ հարաբերություններում խնդրահարույց գործոնների շուրջ կանցկացվեն ընթացիկ շաբաթվա վերջին: Նրա խոսքով՝ հանդիպումը տեղի կունենա արտաքին գործերի նախարարությունների վարչությունների ղեկավարների մակարդակով:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԿՈՉԸ

Եվրոպական խորհրդարանի պատգամավոր Նատալի Լուազոն Հայաստանի քաղաքական ուժերին կոչ է անում միավորվել հանուն խաղաղության: Ըստ պատգամավորի՝ Հայաստանի քաղաքական ուժերը որքան տարանջատված լինեն, այնքան կուրախացնեն հակառակորդներին: Այս մասին ԵԽ պատգամավորը հայտարարել է Հայաստանի խորհրդարանում անցկացվող ԵՄ-Հայաստան խորհրդարանական գործընկերության կոմիտեի 4-րդ նիստում: Նրա խոսքով՝ Եվրոպան գիտի, որ Հայաստանը գտնվում է մարտահրավերներով լի տարածաշրջանում եւ շեշտել է, որ այդ մարտահրավերները հաղթահարելու միակ ճանապարհը միասնական լինելն է: Նատալի Լուազոն ողջունել է հայկական կողմի՝ տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերը: «Մենք գիտենք, որ Հայաստանն ունի երկու հարեւաններ, որոնց հետ նրա հարաբերությունները լավ չեն: Միակ ճանապարհը միավորված լինելն է: Ինչքան տարանջատված լինեք, այնքան կուրախացնեք ձեր հակառակորդներին: Հայաստանի քաղաքական ուժերին կոչ եմ անում միավորվել հանուն խաղաղության»,-ընդգծել է Լուազոն՝հավելելով, որ Հայաստանի՝խաղաղության հաստատման ջանքերին անհրաժեշտ է նաեւ ԵՄ-ի օժանդակությունը: Լուազոն նաեւ գոհունակություն է հայտնել, որ իր երկիրը՝ Ֆրանսիան, ռազմական համագործակցություն է հաստատել Հայաստանի հետ: Նա հավելել է, որ Հայաստանն աշխարհին հայտնի է որպես երկիրը, որը ձգտում է խաղաղության: «Թույլ տվեք այդ առումով ողջունել եւ գովասանքի խոսքեր ասել Հայաստանի այսօրվա կառավարության հասցեին»,-նշել է Լուազոն:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է մարմնական վնասվածքներով ճանապարհատրանսպորտային 10 պատահար:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԹՎԵՐ

500 ՄԼՐԴ ԵՎՐՈ

Ըստ վերջին հաշվարկների՝ Ուկրաինայի վերականգնումը կարժենա շուրջ 500 մլրդ եվրո. այս մասին Ուկրաինայի կառավարության եւ Եվրահանձնաժողովի համատեղ նիստում ասել է վարչապետ Դենիս Շմիգալը, գրում է rbc.ua-ն: «Երբ խոսում ենք Ուկրաինայի վերականգնման մասին, դա նշանակում է, որ եվրոպական ընկերությունները կարող են ներդրումներ կատարել այդ ջանքերում: Վերջին գնահատականները ցույց են տալիս, որ վերականգնումը կարժենա մոտ 500 միլիարդ եվրո: Վերականգնումը կարող է magnum opus (մեծ գործարք) դառնալ Եվրոպայի համար՝միավորելով եւ ամրապնդելով Ուկրաինայի եւ ԵՄ-ի միջեւ համագործակցությունը»,- ասել է նա:

Հիշեցնենք, որ ավելի վաղ Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին հայտարարել էր, որ Ուկրաինայի վերականգնումը կարժենա մոտ 700 միլիարդ դոլար: Զելենսկին միաժամանակ նշել էր, որ վերականգնմանը կմասնակցեն Ուկրաինայի բոլոր գործընկերները, եւ որ նրանք պատրաստ են նման գումար հատկացնել:

ՑՈՒՑԱՆԻՇԸ ԱՃԵԼ Է

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2025 թվականի հունվարին 2024 թվականի հունվարի նկատմամբ աճել է 7.1 տոկոսով, իսկ նախորդ ամսվա՝ դեկտեմբերի նկատմամբ նվազել է 45.3 տոկոսով: Այս մասին փաստում են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալները: Արդյունաբերական արտադրանքի ծավալը հունվարին նախորդ տարվա հունվարի համեմատ նվազել է 10.4 տոկոսով: Շինարարության ծավալն ավելացել է 11.6 տոկոսով: Առեւտրի շրջանառությունում աճը կազմել է 9.9 տոկոս: Նույն ժամանակահատվածում մատուցված ծառայությունների ծավալն ավելացել է 12.6 տոկոսով:

2025 թվականի հունվարին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ սպառողական գների ինդեքսն աճել է 1.7 տոկոսով, իսկ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսն ավելացել է 2.8 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալներում արձանագրվել է 7.8 տոկոս աճ: Արտաքին առեւտրաշրջանառության ծավալն այս տարվա հունվարին 2024-ի հունվարի համեմատ նվազել է 40 տոկոսով: Ընդ որում՝ արտահանումը նվազել է 49.2 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 33.5 տոկոսով: Դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ հունվարին կազմել է 397.89 դրամ:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐԿԵՐԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ ԿԱԶԴԻ ԲՈԼՈՐԻ ՎՐԱ

Բիզնեսի համար հարկերի բարձրացումը կազդի Հայաստանում բացարձակապես բոլորի վրա: Այս մասին հայտնել է Հայաստանի «Փոքր եւ միջին ձեռնարկությունների համագործակցության ասոցիացիա» ՀԿ նախագահ Հակոբ Ավագյանը: Նրա խոսքով՝ ափսոսանք է առաջացնում կառավարության հայտարարությունը՝ շրջանառության հարկն ասիճանաբար վերացնելու մտադրության մասին, եւ այս առումով վաս կանխատեսումներ կան:

Նա նշել է, որ ներդրվում է միկրոբիզնեսի հաշվառման եւ հարկման համալիր համակարգ՝ կոչ անելով իշխանություններին ազնվորեն արձանագրել, որ բիզնեսի հարկային բեռը մեծանում է: «Բացի այդ, կան մի խումբ ապրանքներ, որոնք գալիս են այն երկրներից, որոնց համար փաստաթղթավորման պատշաճ մակարդակն անհնար է»,- ավելացրել է փորձագետը:

Ավագյանը վստահեցրել է, որ սննդի, զբոսաշրջության, ատամնաբուժական ծառայությունների գները կբարձրանան: «Այս ամենի մասին նամակներ ենք գրել պետական մարմիններին՝կոչ անելով հետաձգել օրենքի ընդունումը, սակայն արձագանք չի եղել: Ամբողջ աշխարհը գնում է հարկային համակարգի պարզեցման ճանապարհով, իսկ Հայաստանը՝ հակառակ ուղղությամբ»,- ընդգծել է նա:

«Փոքր եւ միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» ՀԿ փոխնախագահ Արման Պետրոսյանն իր հերթին նշել է, որ Հայաստանում կա մոտ 1 100 հանրային սննդի կետ, որոնց 70 տոկոսը (700-800 տնտեսվարող սուբյեկտ) մինչեւ 70 մլն դրամ շրջանառություն ունեցող միկրոբիզնեսներ են:

Նա նշել է, որ փաստաթղթավորման պահանջը կբարձրացնի նման տնտեսվարող սուբյեկտների հաշվապահական ծառայությունների ծախսերը եւ կբարդացնի տեղի ֆերմերներից սննդամթերքի գնումը: «Հասարակական սննդի ոլորտը զբոսաշրջության մեջ էական դեր ունի, եւ մեր գներն արդեն մոտեցել են եվրոպականին: Հարկային փոփոխությունների արդյունքում դրանք էլ ավելի կաճեն, ինչը կնվազեցնի Հայաստանի գրավչությունը օտարերկրյա զբոսաշրջիկների համար»,- պարզաբանել է Պետրոսյանը: Նրա կարծիքով՝ կառավարությունը չի կարող փակել այն սողանցքերը, որոնց միջոցով խոշոր բիզնեսը փորձում է լուծել իրենց խնդիրները, եւ ամբողջ բեռը գցում է միկրոբիզնեսի վրա:

Հիշեցնենք, որ 2025թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած փոփոխությունների համաձայն՝փոքր եւ միջին բիզնեսի սուբյեկտները, որոնց տարեկան շրջանառությունը 115 մլն դրամից քիչ է, կվճարեն 10 տոկոս (նախկին 5-ի փոխարեն) շրջանառության հարկ, եթե նրանց ապրանքները (ծառայությունները) փաստագրված չեն, իսկ եթե փաստագրված են, ապա հարկի դրույքը կիջնի 1,5-ից 1 տոկոսի շրջանառության համար:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԵՑՎԵԼ Է

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Լոռու մարզային կենտրոնի տեսուչներն անհատ ձեռնարկատեր Հասմիկ Սահակյան ԱՁ-ին պատկանող հանրային սննդի օբյեկտում անցկացվող ստուգման ընթացքում պարզել են, որ այն գործում է իրավական ակտերով սահմանված սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներով (Լոռու մարզ, Վանաձոր ք.): Այս մասին հայտնել են սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից:

Մասնավորապես՝

- արտադրական շինության կառուցվածքը եւ չափսը չեն ապահովել պարենային հումքի եւ սննդամթերքի, աղտոտված եւ մաքուր գույքի հանդիպական կամ խաչաձեւող հոսքերը բացառող տեխնոլոգիական գործառնությունների հոքսայնության հնարավորությունը,
- սարքավորված չի եղել ձեռքերը լվանալու համար նախատեսված լվացարաններով՝տաք եւ սառը ջրով,
- ապահովված չի եղել անձնակազմի համար հանդերձարանով,
- սահմանված չի եղել արտադրական շինության, տեխնոլոգիական սարքավորումների եւ գույքի մաքրման, լվացման, ախտահանման, միջատազերծման եւ կրծողների ոչնչացման գործընթացների պարբերականություն:

Հանրային սննդի օբյեկտի գործունեությունը կասեցվել է, սահմանվել է ժամկետ հայտնաբերված խախտումները վերացնելու համար:

ԿՎԵՐԱՆԱՅԵՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Առաջարկվում է վերանայել կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը: Այս մասին ասել է ՀՀ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը՝ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի՝ փետրվարի 25-ին գումարված հերթական նիստի ընթացքում ներկայացնելով «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Նախարարի խոսքով՝ դրույքաչափերը սահմանվել են 1998 թվականին եւ վերջին անգամ վերանայվել 2006 թվականին: Մասնավորապես, սիգ ձկնատեսակի օգտագործման համար բնօգտագործման վճարի դրույքաչափը կազմում է 65 դրամ, որը 2006 թվականից հետո չի վերանայվել: Նախագծով առաջարկվում է կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը 2 անգամ բարձրացնել եւ միայն սիգ ձկնատեսակի համար եռապատկել բնօգտագործման վճարի դրույքաչափը:

ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՉԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵԼ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Երեւանի կենտրոնի տեսուչները ստուգում են իրականացրել «Դան-Դեսերտ» ՍՊԸ-ին պատկանող կրեմային հրուշակեղենի արտադրամասում (ք. Երեւան, Մարտիրոսյան փ.), որի ընթացքում նմուշառում է իրականացվել բոլոր արտադրատեսակներից եւ հանձնվել լաբորատոր հետազոտության: Այդ մասին հայտնում են ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնից:

Փորձաքննության արդյունքներով՝ միայն «Տորթ արքայախնձորով» արտադրատեսակի նմուշը մանրէաբանական ՄԱՖԱՆՄՔ (մեզոֆիլ աէրոբ եւ ֆակուլտատիվ անաէրոբ մանրէներ) ցուցանիշներով չի համապատասխանել Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին: ՍԱՏՄ ղեկավարի որոշմամբ՝ հրուշակեղենի արտադրամասի արտադրական գործունեության առանձին գործառույթը՝ «Տորթ արքայախնձորով» արտադրատեսակի արտադրությունը, կասեցվել է:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԵՐՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

ԻՆՉ ԴԵՐ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայոց պատմությունը փորձել հենց այնպես մոռանալն անհնարին է: Հայոց պատմության էջերում կան այնպիսի դեմքեր եւ դեպքեր, որոնց մասին յուրաքանչյուր ոք պետք է իմանա:

Օրինակ՝ անմոռանալի է Հայ ազատագրական շարժումը եւ Անդրանիկ Օզանյանը, ով առանձնակի դեր է ունեցել այդ գործում: Անդրանիկ Օզանյանը կամ Զորավար Անդրանիկը, ինչպես եւ անվանում էին նրան, հայոց պատմության մեջ ունի իր առանձնահատուկ դերն ու նշանակությունը:

Փետրվարի 25-ը Զորավար Անդրանիկի ծննդյան օրն է:

ArmLur.am-ը ներկայացնում է Անդրանիկի մտքերը եւ հետաքրքիր դեպքեր Զորավարի կյանքից:

Զորավար Անդրանիկի կյանքն ամենահեշտերից եւ գունավորներից չի եղել:

Անդրանիկը 1 տարեկանում կորցրել է մորը, իսկ մոր կորստից հետո իրեն խնամել է Նազելին՝ ավագ քույրը: Չնայած, որ մանկությունից արդեն կար մորը կորցնելու անդառնալի ցավը, որը երբեք եւ ոչ մի ձեւով չի մոռացվում, Անդրանիկը կորցրել է նաեւ կնոջը: Զորավար Անդրանիկն ամուսնացել է 17 տարեկանում: Ապագա զորավարի կինը մահացել է ծննդաբերության ժամանակ, իսկ հաջորդ օրը մահացել է նորածին որդին: Հետագայում Անդրանիկն ասել է, որ ամենադաժան լուրը, որը լսել է, առաջինը զավակի մահվան լուրն էր, իսկ երկրորդը՝ Գեւորգ Չաուշի:

Անդրանիկ Օզանյանը 17 տարեկանում ձերբակալվել է թուրք ոստիկանին ծեծի ենթարկելու համար, իսկ 2 տարի բանտում մնալուց հետո, ընկերների օգնությամբ փախել եւ հասել է Կոստանդնուպոլիս, աշխատել որպես ատաղձագործ: Օզանյանի հեղափոխական կյանքը հենց այդ ժամանակվանից էլ սկսել է:

Անդրանիկ Օզանյանը հայտնի է իր հերոսական արարքներով: 19-րդ դարի վերջում թուրքերը մտադրություններ ունեին վերացնելու հայդուկապետ Աղբյուր Սերոբին եւ այդ պատճառով էլ թունավորված ուտելիք եւ ծխախոտ են ուղարկել հայդուկապետի տուն: Հայդուկապետ Աղբյուր Սերոբը, ոչինչ չկասկածելով, օգտագործել է թունավորված ծխախոտը: 1899 թվականի նոյեմբեր ամսին արդեն թունավորված Աղբյուր Սերոբը զինակիցների հետ պաշարվել է Գելիեգուզանում: Հայդուկապետի դին ընկել է թշնամու ձեռքը եւ գլխատվել: Կռվում զոհվել են նաեւ Սերոբի որդին ու երկու եղբայրները: Աղբյուր Սերոբի գլուխը թաղվել է Բիթլիսի Սուրբ Կարմրակ եկեղեցու բակում, մարմինը՝ Գելիեգուզանում: Վիրավորվել է կինը՝ Սոսե մայրիկը, եւ գերեվարվել:

Դեպքի մասին իմանալով՝ Անդրանիկ Օզանյանն ու Գեւորգ Չաուշը, միանգամից լծվում են գործի եւ իմանալով բոլոր դավաճանների անունները՝ոչնչացնում են նրանց:

Զորավար Անդրանիկը փայլել է նաեւ իր համարձակությամբ:

Զորավարն ապտակել է 5-րդ բանակային կորպուսի զորահրամանատար գեներալ Տրուխինին 1915 թվականի հուլիսին: Այն բանից հետո, երբ հրաման ստացվեց Վան-Վասպուրականը թողնելու մասին, առաջին կամավորական ջոկատի հրամանատար զորավար Անդրանիկը հեռագրով անմիջապես դիմեց Կովկասյան ճակատի շտաբի պետ գեներալ Յուդենիչին, որ ինքը իր կամավորներով եւ տեղի բնակչությամբ կարող է պաշտպանել Վանը, միայն թե իրենց ապահովեն զինամթերքով եւ լեռնային հրետանիով: Յուդենիչը տվեց իր համաձայնությունը, բայց ահա նրա այդ հեռագիրը Տրուխինը թաքցրել էր: Այդ մասին ահազանգ տվեց Տրուխինի կապիտան Արշակ Շահխաթունին: Այս ամենին ետեւեց Անդրանիկի ապտակը: Սկսվեց Վասպուրականի բնակչության աղետալի նահանջը, հուլիսի 31-ին Վասպուրականի լեռներում ձյուն եկավ, երեխաների զգալի մասը մահացավ: Մոտ 500 երեխաների փրկեցին ռուս կազակները, յուրաքանչյուրը իր յափնջու տակ դուրս բերեց մի երեխայի՝ հակառակ ռուսական զորքի նահանջը իրականացնող գեներալ-լեյտենանտ Աբասցիեւի հրամանի. «Ոչ մի աջակցություն բնակչությանը»: Հայատյաց գեներալը նույնպես իրենը հասանելիք ապտակը ստացել է: Անդրանիկը Աբասցիեւի ոտքերի տակ է նետել Յուդենիչի հեռագիրը՝ հայհոյելով գեներալի ուսադիրները:

Զորավարը բոլորի աչքի առաջ ծեծի է ենթարկել 5-րդ բանակային կորպուսի հետախուզության պետի տեղակալ կապիտան Դեւոյանին, որը չափազանցված տեղեկություններ էր հաղորդել թշնամու գերակշիռ ուժերի մասին:

Ներկայացնում ենք նաեւ զորավարի մտքերը, որոնք, հաստատապես, պետք է կարդալ:

-Ես իմ կյանքում երբեք չեմ ձգտել անձնական երջանկության ու բարօրության: Ես մշտապես ձգտել եմ միայն մի բանի եւ պայքարել եմ միայն մի բանի՝իմ հարազատ ժողովրդի ազատության եւ բարեկեցության համար: Ես չեմ փնտրում իմ վաստակի գնահատականը եւ ցանկանում եմ միայն այն, որ երջանիկ լինի այն ժողովուրդը, որին ես ծառայում եմ ամբողջ կյանքում:

-Եթե այս անգամ մահը ինձ տանի, մարմինս օտար հողի վրա չթողնե՛ք...անպայման Հայաստան փոխադրեք: Եթե հնարավոր չլինի փափագս իրագործել, մարմինս Վառնա տարե՛ք եւ թաղե՛ք քրոջս՝ Նազելի գերեզմանի մոտ:

-Մարդ կարող է հարյուր տուն ունենալ, բայց միայն մի Օջախ:

-Եթե կուզեն ինձ պատիվ անել, ես իմ արձանը չեմ ուզում, փառավոր թաղում չեմ ուզում: Թող հայ ժողովուրդը կանգնեցնի ավերակ դարձած Առաքելոց վանքը եւ այնտեղ փոքրիկ ուսումնարան կառուցի հայ մանուկների համար: Այս է իմ ամբողջ բաղձանքը եւ բարոյական պահանջը հայ ժողովրդից:

-Ամեն օր ձեր գլուխը բարձին դնելուց ու քնելուց առաջ հիշեք, թե այդ օրը ինչ եք արել ձեր ազգի համար:

-Ամեն հայ, եթե միմիայն իր համար ապրելու մասին չմտածեր, մեր աղետների մեծ մասը պակաս կլիներ:

-«Գործս կիսատ մնաց...» սրանք Անդրանիկի վերջին խոսքերն էին մահվանից (օգոստոսի 31, 1927) առաջ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՄԵՆԱՀԱՄԵՐԳ

ԱՄՆ-ում բնակություն հաստատած հայազգի սիրված երգիչ Արման Հովհաննիսյանը գալիս է Հայաստան: Երգիչ Սարո Թովմասյանն իր ինստագրամյան միկրոբլոգի էջի սթորիների բաժնում տեսանյութ է հրապարակել, որում հրաժեշտ են տալիս Արման Հովհաննիսյանին: Նշենք, որ Արման Հովհաննիսյանի մենահամերգը տեղի կունենա մարտի 22-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:

Նշենք, որ մինչ հայաստանյան մենահամերգը Արման Հովհաննիսյանը մարտի 15-ին մենահամերգ է տալու նաեւ Մոսկվայում՝ Live Arena-ում:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆՈՐ ՍԻԹՔՈՄ

«Թեք ստարտափ» սերիալը համատեղում է հումորը եւ տեխնոլոգիան՝ ստեղծելով հետաքրքիր ու ժամանակակից պատմություն: Սյուժեն պտտվում է մի խումբ երիտասարդների շուրջ, ովքեր մեծ երազանքներ ունեն եւ որոշում են հիմնել սեփական ստարտափը: Սակայն ճանապարհը, որով նրանք անցնում են, լի է անսպասելի մարտահրավերներով, զավեշտալի իրադարձություններով եւ բախումներով՝ թե՛ միմյանց, թե՛ իրականության հետ: Սերիալը ոչ միայն կդառնա զվարճալի ժամանցի աղբյուր, այլեւ կբացահայտի ստարտափների ու տեխնոլոգիական ոլորտի աշխարհը՝ ներկայացնելով թե՛ նրանց հաջողությունները, թե՛ ձախողումները:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԴԺԳՈՀ Է ԻՐ ԴԵՐԻՑ

«Բարսելոնա»-ի երիտասարդ կիսապաշտպան Պաբլո Տորեն դժգոհ է կատալոնական ակումբում ունեցած իր դերից եւ ցանկանում է հեռանալ: Այս մասին հայտնում է El Nacional-ը: «Բարսելոնա»-ի ղեկավարությունը՝ Ժոան Լապորտայի եւ Դեկուի գլխավորությամբ, տեղյակ է Պաբլո Տորեի հետ կապված իրավիճակից եւ դեմ չի լինի նրա հեռանալուն: Նշվում է, որ 21-ամյա խաղացողը առաջիկա ամռանը պատրաստ է փոխել ակումբային գրանցում՝ լինի դա վարձակալության, թե ամբողջական տրանսֆերի միջոցով:

Պաբլո Տորեն «Բարսելոնա» է տեղափոխվել 2022 թվականին «Ռասինգից» 5 միլիոն եվրոյի դիմաց եւ համարվել է իսպանական ֆուտբոլի ամենախոստումնալից խաղացողներից մեկը: Ընթացիկ մրցաշրջանում երիտասարդ իսպանացին «կապտանռնագույնների» կազմում մասնակցել է 12 հանդիպման՝դառնալով 4 գոլի եւ 3 գոլային փոխանցման հեղինակ:

16 ԳՈԼ՝ ՄԻԱՅՆ ԱՅՍ ՏԱՐԻ

ՊՍԺ-ի վինգեր Ուսման Դեմբելեն 2025 թվականի սկզբում շատ արդյունավետ է գործում: 27-ամյա ֆուտբոլիստն արդեն 16 գոլ է խփել միայն այս տարի: Առաջատար հինգ առաջնությունների բոլոր ներկայացուցիչներից միայն Լիոնել Մեսսին եւ Կրիշտիանու Ռոնալդուն են այս ցուցանիշին հասել օրացուցային տարվա առաջին երկու ամիսների ընթացքում՝ սկսած 21-րդ դարի սկզբից: Ուսմանն արդեն հավասարվել է պորտուգալացուն, ով նույնպես 16 գոլ է խփել հունվար-փետրվարին: Ռեկորդը պատկանում է արգենտինացուն՝նշված ժամանակահատվածում՝ 17 գոլ:

ԹՈՒՐՔ ՄՐՑԱՎԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՂԵՏ ԿԼԻՆԵՐ

«Ֆեներբախչեի» գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն Թուրքիայի առաջնության 25-րդ տուրի «Գալաթասարայի» հետ հանդիպումից հետո (0:0) գոմեստի խոսքեր է հնչեցրել խաղը սպասարկող մրցավարական անձնակազմի վերաբերյալ: Հանդիպումը սպասարկում էր մրցավարական թիմը՝ սլովենացի Սլավկո Վինչիչի գլխավորությամբ:

«Շատ լավ հանդիպում էր մրցավարի հիանալի աշխատանքի շնորհիվ: Նա բավական ազնիվ էր: Եթե Թուրքիայում մրցավարները նայեն այս խաղը սպասարկող Վինչիչի աշխատանքին, ինքնաքննադատեն ու ասեն՝ ես ուզում եմ նրա պես մաքուր եւ արդար գործել, ապա մրցաշրջանի ավարտը հետաքրքիր կլինի: Եթե շարունակվի այն կրկեսը, որը տեսնում ենք տարեսկզբից, ամեն ինչ այլ կերպ կլինի: Խաղից հետո ես մտա մրցավարի սենյակ եւ ասացի. շնորհակալ եմ, որ եկաք այստեղ եւ սպասարկեցիք այս կարեւոր հանդիպումը: Այնտեղ թուրք մրցավար կար. ես շրջվեցի դեպի նա եւ ասացի, եթե այս հանդիպումը թուրք մրցավար սպասարկեր, աղետ կլիներ: Նրանք շատ ուժեղ են ընդհատակյա ռազմավարություններում»,- Մոուրինյուի խոսքերն է մեջբերում Fanatik-ը:

● *Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում փետրվարի 27-ին տեղի կունենա «Շան սիրտը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500, 3000, 3500 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչո՞ւ է Կյանքի խոսք եկեղեցին համարվում աղանդ:

Փիրուզա Մելքոնյան (39 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Շատ մարդիկ անտեղյակ են եւ չգիտեն, թե ինչով է տարբերվում Կյանքի խոսք աղանդը Հայ Առաքելական Սուրբ եկեղեցուց:

«Կյանքի խոսք» աղանդը մերժում է Մյուռոնը, մերժում է նաեւ եկեղեցին, որը հաստատեց Քրիստոս վերնատան մեջ: Վերնատունը եղավ առաջին եկեղեցիմատուռը, ուր հավաքվում էին առաքյալները: Նրանք մերժում են նվիրապետական կարգը, որը հաստատեցին Քրիստոս եւ իր առաքյալները: Նրանք մերժում են սրբերի բարեխոսությունը, մերժում են սրբազան ավանդույթը: Կարելի է այս շարքը շարունակել, սակայն այսքանը բավական է ցույց տալու համար, որ իրականում «Կյանքի խոսքը» տարբեր է Հայ եկեղեցուց եւ այդ տարբերության արդյունքում համարվում է աղանդ, այսինքն՝ շեղված ճշմարիտ ուղղուց:

Քրիստոսի եկեղեցու ճշմարտությունը առաքելական դավանանքի մեջ է: Եկեղեցին հաստատեց Քրիստոս եւ Իր առաքյալները շարունակեցին այդ նվիրական առաքելությունը: «Կյանքի խոսք» աղանդը ոչ մի կապ չունի առաքյալների հետ: Ո՞վ է ստեղծել այդ «եկեղեցին». Քրիստոսի առաքյալնե՞րը. բնականաբար՝ ոչ, սովորական մարդի՞կ՝ այո՛: Եթե այդպես է, եկեք վաղը ես եւ դուք մի եկեղեցի «բացենք», նույն Աստվածաշնչով, դավանանքով, Ս. Երրորդության «հավատքով», ի՞նչն է մեզ խանգարում նման եկեղեցի բացել: Ասել, որ ես Ս. Երրորդությունն ընդունում եմ, Աստվածաշունչը՝ կարդում, աղոթում եւ այլն, դեռ բավական չէ, իսկ ինչպե՞ս ենք փրկվելու, Քրիստոսին իբրեւ Փրկիչ ընդունելո՞վ, բնականաբար՝ ոչ. դա շատ միամիտ է ասված: Իսկ ո՞ւր մնացին հաղորդությունը, ապաշխարությունը, խոստովանությունը, եկեղեցու յոթ խորհուրդները, որոնք հենց Քրիստոս հաստատեց, Սրբազան ավանդույթը, որ Պողոս առաքյալը պատգամում է սրբորեն պահել:

Արարատյան հայրապետական թեմ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Կյանքի խոսք» աղանդը համարվում է տոտալիտար, այսինքն՝ քայքայիչ գործունեություն ծավալող մի կազմակերպություն, որը վտանգում է մարդու եւ հասարակության հոգեւոր առողջությունը:

ԷՋԸ՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ի՞նչ հերթականությամբ են հաշվարկվում երաշխավորված ավանդները:

Ամալյա Հարությունյան (60 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երաշխավորված ավանդի հատուցման ենթակա գումարը հաշվարկելիս առաջին հերթին հաշվարկվում են դրամային ավանդները, իսկ երկրորդ հերթին՝ արտարժութային ավանդները: Ընդ որում առաջին հերթին հաշվարկվում են ավանդների հիմնական գումարները (ավանդատուի կամ երրորդ անձի կողմից հօգուտ ավանդատուի բանկին տրամադրված կամ բանկում առկա դրամական գումարը, որը ենթակա է վճարման ավանդատուին, ավանդատուի բանկում բացված հաշիվների վրա գտնվող դրամական միջոցները եւ բանկի թողարկած անվանական արժեթղթերով ներգրավված դրամական միջոցները), իսկ երկրորդ հերթին՝ վերը նշված դրամական միջոցների վրա հաշվարկված տոկոսների գումարները:

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե ավանդատուն անվճարունակ բանկի նկատմամբ ունի խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը հաշվարկվում է բանկային ավանդի եւ խնդրահարույց պարտավորության հաշվարկված դրական պարտավորության հիման վրա:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ամբողջ աշխարհում կաթոլիկներն աղոթում են Հռոմի պապ Ֆրանցիսկոսի ապաքինման համար: Ջանգվածային աղոթքներ են կազմակերպվել Վատիկանում, Իտալիայում, Արգենտինայում, Մեքսիկայում, ԱՄՆ-ում, Ֆիլիպիններում եւ այլ երկրներում:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ Հռոմի պապ Ֆրանցիսկոսի կլինիկական վիճակում, չնայած ծանրությանը, աննշան բարելավում կա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-15 - 20 -4 - 7
Կոտայքի լեռներ	-15 - 19 -5 - 7
Կոտայքի նախալեռներ	-6 - 10 -1 - 3
Գեղարքունիք	-16 - 20 -6 - 8
Լոռի	-10 - 15 -3 + 1
Տավուշ	-5 - 8 -2 + 2
Արագածոտնի լեռներ	-16 - 20 -6 - 10
Արագածոտնի նախալեռներ	-6 - 9 0 - 3

Արարատ	-4 - 7 0 + 2
Արմավիր	-6 - 9 0 + 3
Վայոց ձորի լեռներ	-15 - 20 -6 - 9
Վայոց ձորի նախալեռներ	-6 - 11 0 - 3
Սյունիքի հովիտներ	-5 - 9 0 - 4
Սյունիքի նախալեռներ	-12 - 17 -2 - 5
ԼՂՀ	-11 - 15 -2 - 4
Երեւան	-5 - 9 -4 - 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.2.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*